

Ամփոփ նյութ

«ԻՆՉՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 06.02.2012թ. թիվ 1/81Ա որոշմամբ «Ինչո Արմենիա» ԱՓԲԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոցներ՝ ապահովագրական գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

06.02.2012թ.  
ք. Երևան

1/81Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ  
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Որոշում եմ՝**

1. «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից սույն որոշման նկարագրական մասի 1-ին կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի նկատմամբ կիրառել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

2. «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի նկատմամբ կիրառել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով և նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները բացառելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ մուտքագրվելու կամ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՐԹՈՒՐ ԶԱՎԱԴՅԱՆ